ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԶՆՎԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Ազնվաձոր 1 փող.2նրբ.1 ☎ /0322/ 6-03-73


Թիվ 249
19. 08.2020թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Ղուկասյանին

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ. թիվ 01/107,3/00404-2020 գրության Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ավազանու հերթական նիստի վերաբերյալ տեղեկատվությունը, օրակարգը և նախագիծը:

Առդիր 5 էջ

Համայնքի ղեկավար՝ Ն. Հովսեփյան

# ՆԱԽԱԳԻԾ

ԱՁՆՎԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020թ.

ՕԳՈՍՏՈՍԻ 24–Ի ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

թիվ 23 ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով `

Ագնվաձոր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ագնվաձոր համայնքի ավագանու 2020թ.-ի օգոստոսի 24-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տրամադրելու մասին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# թիվ 24 ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ Կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի 286-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Ազնվաձոր համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ավագանին տալիս է իր համաձայնությունը աճուրդով վաճառքի սահմանված կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասը.

1.Ազնվաձոր համայնքի 06-010-0113-0043 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.7392 հա խոտհարքը,1 լոտով,մեկնարկային գինը՝969.000 ՀՀ դրամ:

Նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոս: Աճուրդի մասնակցության վճարը 2000 ՀՀ դրամ :

ՆԱԽԱԳԻԾ հողբաժին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

թիվ 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ <<Հողային օրենսգրքի >> 60-րդ հոդվածով՝

*Ագնվաձոր համայնքի ավագանին որոշում է՝*

1. Տալ համաձայնություն Ագնվաձոր համայնքի համայնքային սեփականություն հադիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքը մրցույթով՝ 25 տարի ժամանակով վարձակալության տրամադրելու համար.
   1)06-010-0101-0198 ծածկագրով 0.46369հա վարելահողի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 3500/երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,մրցույթի մասնակցության վճարը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,նախավճարի և քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
2. Համայնքի ղեկավարին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել մրցույթի մասին ծանուցումը:

# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ազնվաձոր համյնքի ավագանու հերթական (արտահերթ) նիստի և համայնքային նշանակության այլ միջոցառումների(ՏԻՄ-երի ասուլիսների,հանրային քննարկումների )վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| Ազնվաձոր | Ավագանու արտահերթ նիստ | 24.08.2020թ. | 11:00 | Ազնվաձորի համայնքապետարան(1-ին փող. 2-րդ նրբ. 1) |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. օգոստոսի 24-ին՝ ժամը 11.00-ին Ագնվաձորի համայնքապետարանում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

**<u>ժամը՝ 11.00</u>**

1.Ագնվաձոր համայնքի ավագանու 2020թ. օգոստոսի 24-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ն.Հովսեփյան

2.Համայնքայինի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ն.Հովսեփյան

3.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տրամադրելու մասին

զեկ. Ն.Հովսեփյան